

Արձանագրություն թիվ 5

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍ

28 դեկտեմբերի 2014թ.

ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ա.Ռ.Մելքունյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 10 անդամները: Հրավիրվել էին նաև ամբիոնների դասախոսներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2014-15 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական պարապմունքների ավարտի գործընթացի քննարկում. մուտքերի կատարողականով:
/զեկ.Ա.Շ.Մարգարյան/
2. Երկրորդ ընթացիկ ստուգումների, քննությունների և ստուգարքային շրջանի ամփոփում:
/զեկ.Ա.Շ.Մարգարյան/
3. Ֆակուլտետի զարգացման 2015թ. տարեկան ծրագրի քննարկում:
/զեկ.Ա.Շ.Մարգարյան/

ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Նա ներկաներին տեղեկացրեց, որ ըստ ֆակուլտետի խորհրդի հաստատված աշխատանքային պլանի հերթական նիստին նախատեսված է երեք հարց:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Նա ներկայացրեց 2014-15ու. տարվա I կիսամյակում կատարված աշխատանքները կապված ուսումնական գործընթացի հետ և նշեց, որ ըստ ժամանակացույցի իրականացվել են բոլոր աշխատանքները, որոնք նախատեսված են եղել ուսումնական գործընթացի կազմակերպման համար:

Ձեկուցողը հատուկ ընդգծեց, որ կիսամյակի ընթացքում դասաժամի բացթողում չի եղել, իսկ ուսանողների կողմից անհարգելի բացակայությունների պատկերը հետևյալն է՝ դեկանի կողմից նկատողության են արժանացել 10, տնօրենի կողմից խիստ նկատողության 3, իսկ 90ժ. և ավելի անհարգելի բացակայության չի գրանցվել/բոլորը երրորդ կողմից/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ա.Հ.Միրզոյանը, Մ.Մելքումյանը, Մ.Մելքումյանը, Մ.Ստեփանյանը, Ա.Զիբուխյանը: Նրանք առաջարկեցին քննաշրջանի ընթացքում անհարգելի բացակայություն ունեցող ուսանողներին խիստ հետևել և ապահովել առավել օբյեկտիվ մոտեցումներ՝ հատկապես կիրառական արվեստ մասնագիտության երրորդ կուրսում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Մասնագիտական առարկաների բոլոր քննությունները անցկացնել հանձնաժողովներով:

Օրակարգի երկրորդ հարցի մասին զեկուցումով հանդես եկավ Ա.Շ.Մարգարյանը: Նա ներկայացրեց 2014-15 ուստարվա I կիսամյակի II ընթացիկ քննությունների, ստուգումների և ստուգարքային շրջանի առաջադիմությունը, որը կցվում է արձանագրության տեքստին:

Այնուհետև զեկուցողը տվեց հանձնարարականներ ամբիոնների վարիչներին և դասավանդող դասախոսներին, քննություններին պատշաճ նախապատրաստվելու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Հ.Միրզոյանը, Մ.Մելքումյանը, Մ.Ստեփանյանը, Ա.Զիբուխյանը: Նրանք համակարծիք էին զեկուցողի հետ և նշեցին, որ քննաշրջանի անցկացման համար իրականացվել են բոլոր անհրաժեշտ գործընթացները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հանձնարարել ամբիոնների վարիչներին ժամանակին և բարձր մակարդակով իրականացնել քննաշրջանի կազմակերպման հետ կապված աշխատանքները:
2. Հանձնարարել ամբիոնների վարիչներին, դեկանատին և մասնագիտության պատասխանատուին քննաշրջանի ընթացքում սահմանել վերահսկողություն:

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ դեկանի ժ/պ Ա.Շ.Մարգարյանը և նշեց, որ ֆակուլտետի 2015թ. զարգացման Ռազմավարական ծրագիրը բխում է մասնաճյուղի զարգացման 2011-2015թթ. Ռազմավարական ծրագրից: Այնտեղ մատնանշված են բոլոր այն նպատակներն ու նրանց հասնելու համար անհրաժեշտ խնդիրները, որոնք պետք է իրականացնել մասնաճյուղի առաքելությունը

կատարելու համար: Այն գործընթացները, որոնք տարբեր պատճառներով չեն իրագործվել 2014 թվականին , նրանք տեղափոխվում են 2015թվական:

Զեկուցողը նշեց , որ առաջիկա տարում պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել կրթական ծրագրերի արդյունավետ իրագործմանը , դասավանդման նորագույն մեթոդների ներմուծմանը, ուսանողներին դասապրոցեսին առավելագույն չափով ընդգրկելու պրոցեսին, կարգապահության բարձրացմանը և այլ կարևոր հարցերին , որոնք նշված են ծրագրում:

Ֆակուլտետի 2015թվականի զարգացման ծրագրի նախագիծը կցվում է արձանագրությանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ս. Հովհաննիսյանը և Ա.Հ.Միրզոյանը, որոնք իրենց հավանությունը տվեցին ծրագրի նախագծին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ֆակուլտետի 2015 թվականի զարգացման ռազմավարական ծրագիրը ներկայացնել ՄԿՈԱ բաժին՝ ստուգելու համապատասխանությունը մասնաճյուղի 2011-2015թթ. զարգացման ռազմավարական ծրագրի հետ, որից հետո ներկայացնել մասնաճյուղի գիտական խորհուրդ՝ հաստատելու այն:

ՆԱԽԱԳԱՀ

Ա. Շ.Մարգարյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ա.Ռ.Մելքումյան